

10.206

Ի Ա Ս Ե Լ ՈՐ Ա Կ Ա Ն Թ Ա Տ Ր Ո Ն

ՅԵՐՐՈՐԴ ՍՄԵՆԱ

ԴՐԱՄԱ ԶՈՐՍ ԴՈՐՆ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1931

891.71

բ-81

21 JUL 2006

Բ-781

№ 2

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

25 NOV 2010

№ 2

ՅՈՒ. ԲԱԼՈՏՈՎ

ՅԵՐՐՈՐԴ ՍՄԵՆԱ

ԴՐԱՄԱ. ՉՈՐՍ ԳՈՐԾ.

Թարգմանություն ԱՐՇ. Տ. ՀՈՎՆԱՆՅԱՆԻ

ԳԵՏՀՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

05.03.2013

10.206

Պետերբուրգի տպարան
Դրամ. № 6382 (բ.)
Հրատ. № 1614
Պատ. № 2189
Տիր. 4000



4614 - 84

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

1. ՎԱՐՎԱՐԱ ԳՐԵՆԵՎԱ, «Կարմիր շող» մանագործարանի գլխավոր: Առաջ քաշված: Յերիտասարդ, յեռանդուն կին:
2. ՆԻԿՈԼԱՅ, նրա ամուսինը: Նույն գործարանի բանվոր: Կամազուրկ և թուլամորթ:
3. ԿԱՏՅԱ, նրանց աղջիկը, տասը տարեկան: Պիոներուհի:
4. ՖԵՈԴՈՐ ՍՏԵՊԱՆԻՉ ՎԼԱՍՅԵՎ, արտադրական հանձնաժողովի անդամ: Միջին տարիքի: Լրջմիտ. խիտ մորուքով:
5. ԼԻՋԱ, նրա քույրը: Ճղճղա՛ն, տարիքն առած աղջիկ: Ներկում է շրթունքները և շպարվում է:
6. ԱԼԵԳՍԵՅ ԿՐՅՈՒԿՈՎ, գործարկումի նախագահ:
7. ՅԵԳՈՐ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ՄԻԼՆԻԿՈՎ, ավագ ճարտարապետ: Ծանրամարմին, քայքայված, ջրգողութուն հիվանդությամբ տառապող ծերունի:
8. ՎԱՍՅԱ, կոմյերիտական:
9. ՄԱՇԱ, կոմյերիտուհի:
10. ԱԿՈՒԼԻՆԱ, պառավ կին: Տեխնիկական ծառայող: Միբուռ է քրթնջալ և կշտամբել:

Գործողութունը կատարվում է մեր որերում, գավառական գործարաններից մեկում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Գործարանի դիրեկտոր Վարվարա Գրեքենվալդի սենյակը։
 Զայն լուսամուտ, վորից յերեվում ե գործարանի կորպուսները
 յեվ բակը։ Յերկու դուռ։ Մեկը մուտքի, իսկ մյուսը տանում ե
 դեպի կից սենյակը։ Պատի մոտ—յերկաթյա մահճակալ։ Անկյու-
 նում—աստիճանակ, վրան գրքեր, լրագրեր յեվ կավե վագա-
 Մուտքի դռան մոտ—փոքրիկ պահարան, ամանեղենով։ Տաքու-
 րետի վրա լրագրով ծածկված—պրիմուս յեվ թեյնոց։ Սենյակի
 մեջ տեղ սեղան—վրան թղթեր, գծագրեր յեվ պլաններ։ Բա-
 ժակներ լվանալու թաս—ծխախոտի թերուցքներով լիքը։ Ծխա-
 խոտի ծուխը լողում ե դեպի առաստաղ։ ՎԱՐՎԱՐԱՆ խոնարհ-
 վել ե սեղանին։ ԿՐՅՈՒԿՈՎԸ նստած ե տարուրետի վրա, մի
 վոտքը տակը ծալած։ ՎԼԱՍԵՎԸ նստած ե յետ ընկած աթոռի
 մեջքին ու ձեռքերը ծալած կրծքին։ ՄԻԼՆԻԿՈՎԸ կրել ե, իր ամ-
 բողջ ծանրությամբ հենվելով իր—փափուկ վերջավորությամբ
 ձեռնափայտին։ ՎԱՍՅԱՆ կանգնել ե, ձգված, գլուխը յետ գցած,
 ծոծրակով պատին հենված։ Մարդիկ հոգնած են անբուն գիշեր
 անցկացնելուց։ Նրանց դեմքերը կանաչ են ու լարված։ Միլնի-
 կովը շնչում ե ծանր, ձեռքը դնում ե կրծքին ու լսում ե իր սրը-
 տի զարկերը։ Լուսամուտից ներս ե սողում առավոտյան այգի
 հագիվ նկատելի մեզը։ Վեռական յեվ ծանր խորհրդակցության
 գիշեր։

ՎԱՐՎԱՐԱ.—(Տեղից բարձրանալով) Նշանակում ե, կարող ենք։
 (Լուսքյուն)։

ՄԻԼՆԻԿՈՎ.—Կա... կա... (Հագում ե, ձեռք կրծքին սեղմելով)։

ՎԱՍՅԱ.—Վճռված ե ե կարիք չկա քսան անգամ կրկնել։

ՎԼԱՍՅԵՎ.—Ամեն ինչ կարծես նախատեսած ե...

ՄԻԼՆԻԿՈՎ.—(Շունչ փռելով) Ֆոռ, այս հազը։ Մի որ կխեղդե...

Սիրտս ուղղակի կոկորդիս դեմ առավ... Կարող ենք, Վար-
 վարա Իվանովնա։

ՎԱՐՎԱՐԱ.—(Կոյուկովին) Իսկ դու ի՞նչ կասես:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Ձեռք կարող:
 ՎԱՐՎԱՐԱ.—Ահա, նորից: Ախր ինչո՞ւ:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Ձեռք դիմանա: Ի՞նչպես կարող ենք յոթժամյա աշ-
 խատանքի անցնել, չեթե նախապատրաստություն չկա:
 ՎԱՐՎԱՐԱ.—Կլինի:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Ուժեքը թույլ են: Հոժմոյթի պակասություն կա:
 Սարքավորումն անպետք է: Նեղվածք է... Քիչ պատճառ-
 ներ կան:
 ՎԼԱՍՅԵՎ.—Հապա ինստրուկցիաները: Հապա տրեստի պահանջ-
 ները:
 ՎԱՍՅԱ.—Վո՛ւ թե պահանջները, գրողը տանի, այլ կարգադրու-
 թյունը, հրամանը: Հետադոտել, նյութեր հավաքել և մատ-
 նանշել շուտափույթ անցման անհրաժեշտ տվյալները:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Յե՛վ հետադոտել ենք, և՛ մատնանշել ենք, բայց գործ-
 նականում այդպես հեշտ չե:
 ՎԱՍՅԱ.—Մեղանից է կախված: Մեղ վստահել են: Չեմ հասկա-
 նում քեզ, Ալեքսեյ:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Ինչ անենք: Չեմ կարող ինքս ինձ հակառակ գնալ:
 ՎԱՐՎԱՐԱ.—(Հուզված ֆալսով է) Ընկերներ, այդպես չի կարելի:
 Հարկավոր է վերջացնել և վո՛չ թե քաշքշել: ԲՆԻՆԻ ինձ վըս-
 տահել է նախապատրաստական աշխատանքներ տանել: Բը-
 ջիջը նշանակել է հանձնաժողով: Յեթե մենք համաձայնու-
 թյան չգանք, լես կհրավիրենք ԲՆԻՆԻ քարտուղարին, թող նա
 մեզ ղեկավարի:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Սպասիր: Քո կարծիքով ուրեմն առանց մտածելու
 տակ ու գլուխ արա,—և համեցեք: Իսկ քիչ դժվարություն-
 ներ կան: Դու լծիր այն ժամանակ, չերբ լուծը քաշող կա...
 Իսկ յեթե սանտկենք: Չե, սա զուր աղմուկ է: Անխելքու-
 թյուն:
 ՄԻԼՆԻԿՈՎ.—Թույլ տվեք, պատվերի մարդ, չե՞ վոր դուք համա-
 ձայնել եք... Դուք չերեք ամիս է մեզ հետ աշխատում եք
 գործարանը յոթ ժամի փոխադրելու կամպանիայում: Առաջ
 ի՞նչ ելեք մտածում: Լավ չե, պատվերի մարդ: Ահա:
 ՎԱՍՅԱ.—Հասկանալի չե,—լավ չե:
 ՄԻԼՆԻԿՈՎ.—Ինչպե՞ս հասկանալ դա, պատվերի մարդ:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Այնպես, ինչպես ասված է:
 ՎԼԱՍՅԵՎ.—Իհարկե, կարող է այսպես ել լինել, այնպես ել լի-

նել: Դու ինչպես ել ուղղում ես, շուտ տուր, այնուամենայնիվ
 կին ես, Վարվարա, և քո մեջ կանացի շտապողականություն
 կա: Դրականություն չկա:
 ՎԱՐՎԱՐԱ.—Յես հենց նոր հալտարարեցի: Առաջարկում եմ հրա-
 վերել ԲՆԻՆԻ քարտուղարին:
 ՄԻԼՆԻԿՈՎ.—Սպասեցեք: Ի՞նչ կանացի շտապողականություն...
 Վարվարա Իվանովնան խելացի և լեռանդուն մարդ է: Յես նրա
 սխալները չեմ տեսնում, իսկ տեսնել քսան տարվա ընթաց-
 քում սովորել եմ: Ստանոկի մոտ Վարվարա Իվանովնան լավ
 համարում ունի, և վորպես առաջ քաշված դիրեկտոր, ապա-
 ցուցեց իր այսպես ասած, վարչական տաղանդը: Ահա:
 ՎԱՍՅԱ.—Բռնվո, Յեգոր Սերգեյիչ: Այ քեզ խելառ մարդ. Դուք
 ի՞նչ ե, առաջ քաշվածների դեմ եք: Անվստահությո՞ւն եք
 հայտնում: Յերևում է դուք ել մեղհանական նախապաշար-
 մունք ունիք, վոր կնոջ տեղը խոհանոցն է:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Չուր տեղը մի զրպարաիր: Քո գործը չե այդպիսի
 հարցերում խառնվել:
 ՎԱՍՅԱ.—Ահա թե ինչ... Այդ ինչո՞ւ: Հիմարություններ ես ա-
 սում: Յես հանձնաժողովի իրավագոր անդամ եմ: Յես կոմ-
 յերիտմիություն կողմից եմ:
 ՎԱՐՎԱՐԱ.—Չեմ հասկանում: Վոչինչ չեմ հասկանում: Ինչպե՞ս է
 հապա ուրիշ տեղերում: Մեծ թվով գործարաններ անցել են
 յոթ ժամի: Այժմ մեր հերթն է... Յե՛վ անա աշխատել ենք:
 Յերեք ամիս մեր հանձնաժողովը նիստեր է գումարում:
 Ընդհանուր ժողովներում մեր վորոշումները հաստատել ենք:
 Ամբողջ գործարանին մեր յուրաքանչյուր քայլի հետ ծանո-
 թացրել ենք: Կշռել ենք, չափել, գործի յենք անցել... Սկը-
 սում ենք նոր ձևով առաջ մղել կյանքը, հնգամյակ ենք անց-
 կացնում,—և ահա քեզ: (Մոտենում է սեղանին, յիվ ակրնդեթ
 դառնում Կոյուկովին) Ի՞նչը չես հասկանում, ի՞նչը: Ի՞նչ ան-
 հասկանալի բան կա քեզ համար:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Հենց դա:
 ՎԱՐՎԱՐԱ.—(Տարածելով ձեռներ) Ընկերներ, ի՞նչ անել: Սպա-
 սել չերբ կենտրոնից տրեստի սպեցները բարեհաճեն գալ և
 սկսեն խփել ու բոլորիս դե՛րս շարտեն:
 ՄԻԼՆԻԿՈՎ.—Ամոթ է դա և անվայել:
 ՎԱՍՅԱ.—Ճիշտ է, ամոթ է: Մենք մեր գործարանն ավելի լավ
 գիտենք: Յուրաքանչյուր ստանոկ, յուրաքանչյուր պտուտակ:

Յեզուր Սերգեյիչը քսան տարի այս գործարանումն է։ Դու, Ալեքսեյ, գործարկումի նախագահ ես. քեզ հարգում են, քեզ վստահում են... Բայց այսպիսի տարածաշրջանում ես մշտ-
ցնում։ Քեզ կհետևեն անգիտակիցները, ծուլերը... Հարե-
ցողի, պրոգնոզիկի համար միշտ տոն է։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Քչեց... Մի սովորեցրու... Գիտեմ, լսել եմ։

ՎԱՐՎԱՐԱ.—(Կեկիմ Կոլոկովին) Նշանակում է ընկեր Կրյուկով,
զուր ենք կոկորդ պատուել, զուր ենք գիշերներ լուսացրել։
Նշանակում է բալորը իզուր ե... Դատարկ տեղը։

ՄԻՆԻԿՈՎ.—Հիմարություն է և փոքրագություն։ Ահա։

ՎԱՍՍՅԱ.—Իսկապես ստացվում է քաղաքը և հիմարություն։
Սաղ չի գալիս մեզ։

ՎԱՐՎԱՐԱ.—Սպասիր, Յեզուր Ստեպանիչ... (Ձայնով իրեն, առ-
խառնով իրեն մեղմ յեվ համոզիչ) Յես ուզում եմ, վոր դու,
ընկեր Կրյուկով, հասկանաս... Հարցրու, բոլոր հարցերիդ
կպատասխանեմ։ Վերտեղ, ինչպես է խոչընդոտը։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Յես արդեն ստացի։

ՎԱՐՎԱՐԱ.—Լավ։ Ինձ լսիր... Ահա կանցնենք յոթ ժամի, աշխա-
տավարձը պակասում է։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Վոչ։

ՎԱՍՅԱ.—Դե ի հարկե վոչ։

ՎԱՐՎԱՐԱ.—Յոթ ժամում ավելի քիչ ենք արտադրելու։ Պետք է
վոր քիչ լինի... բայց վոչ։ Դա ապացուցել են մյուս գործա-
րանները։ Ռացիոնալացումը և նոր սարքավորումը կբար-
ձրացնեն արտադրողականությունը։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Այստեղ է հենց անորոշությունը։

ՎԱՐՎԱՐԱ.—Հիմա յեվ անորոշություն։ Հասկացիր վերջապես։
Մեքենաները ստուգված են ժամացույցի նման, բոլոր մա-
սերը սարքին են, հիվանդ մեքենաներ չկան... Աշխատանքը
վորոշակի յե, առանց պրոգնոզների, առանց դադարների։
Խիստ, միանման և արագ աշխատանք։

ՎԱՍՅԱ.—Այո, առանց դադարի, առանց ծխելու, առանց ու-
բորնիայում լեզվին տալու։ Ծուլերի վզակոթին տալ։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ծուլերի։ Ահա։ Այստեղից ել հենց կսկսվի... Այս-
տեղ ել հենց քեզ կշարունակեմ։ Իսկ յեթե նա ծուլ չէ, այլ առ-
գիտակից է։ Ձե, դու լավ հասկացիր, դա նուրբ խնդիր է։

ՎԱՍՅԱ.—Իսկ ի՞նչ ասեց քեզ, վոր առանց պաշարի, առանց սխալ-
ների կլինի։

ՎԱՐՎԱՐԱ.—Սպասիր, վասյա։ Դրա համար ել հենց դու, ընկեր
Կրյուկով, գործարկումի նախագահ ես, վորպեսզի մեզանից
ամեն մեկին ուսումնասիրես։ Բջիջ գնա, վորպեսզի չսխալ-
վես, վորպեսզի ճիշտ ղեկավարություն ստանաս։ Կուսակ-
ցական գիծը քեզ համար պարզ է,—ել ինչպես է բանը։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Գործնականում այդ այդպես չէ... Խոսքով ամեն
բան կարգին է, իսկ գործնականում...

ՎԱՐՎԱՐԱ.—Վաղն Լյեթ բջիջում կասեմ, վորպեսզի քեզ խելքի
բերեն։ Ձի կարելի այդպես, ընկեր։ Համառ ես դու—հա
ինչ եմ տեսնում չես։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Յոթ չափիր—մեկ կտրիր։

ՎԱՐՎԱՐԱ.—Վոչ, թանգագին ընկեր, այդպիսով մենք պետական
պլան կատարել չենք կարող։ Մեզ գերեկտիվներ է տված,
ժամկետ է սահմանված և կարիք չկա զուր տեղը ջուր ծե-
ծել։ Լսիր հետո... ժամերի կրճատումով, այդ պայմաններում,
արտադրանքը չի իջնի, այլ կբարձրանա։ Իսկ վերջին հաշ-
վով—առավել համեմատություններ կստացվի ավելցուկ։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ձի ստուգված։ Վոչ վոր չի հաշվել դա։

ՄԻՆԻԿՈՎ.—Սպացուցված է, պատվելի մարդ։ Ութ ժամի վոր
անցանք... արտադրությունը բարձրացավ։ Հիշեցիք։ Ձանա-
սիրությունն ավելի յե, հոգնածությունը—քիչ։ Դուք, պատ-
վելի մարդ, ինձ, հին գելիս լսեցիք։ Միթե մենք միանգա-
մից ենք ուզում։ Միթե մենք արջուն ենք ծծելու։ Այժմ մեզ
համար լուրջ մոմենտ է. ամբողջ արտադրության և տնտե-
սության վերակառուցումը...

ՎԱՍՅԱ.—(Ծիծաղում է) Դե ի հարկե, ի հարկե։ Յես ել նույնն
ելի ուզում ասել։

ՄԻՆԻԿՈՎ.—Միանգամից չի յեվ կարելի։ Հրեն մենք չերեք ամիս
և պլաններ ու նախահաշիվներ ենք մշակում, բայց դեռ ինչ-
քան անցման մոմենտներ կան... ճշմարիտ է, վորտեղ հնա-
բավոր է, շուտ կարվի, իսկ վորտեղ վոչ... դե ինքներդ հաս-
կանում եք։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ամեն բան չենք հասկանում, ընկեր ինժեներ։

ՎԱՍՅԱ.—Դուրս ես դու, Ալեքսեյ։

ԿՐՅՈՒԿՈՎ.—Դե, դու լավ կանես սուս անես։

ՎԱՐՎԱՐԱ.—Վասյա, մի խանգարիր։

ՎԱՍՅԱ.—(Բորբոխով) Ձեմ կարող համբերել, չերեք նա դիտմամբ
չի հասկանում...

ՎԱՐՎԱՐԱ.—Թող, Վասյա, վոչ վոք դիտմամբ արդելք չի հանդիսանում:

ՄԻՆԻԿՈՎ.—Ո՛ր-ո՛ր-ո՛ր... Իմ սիրտը կպատուվի, ընկերներ, հընդ-կակա՞ն աքաղաղներ... (Հագում է):

ԿՐՅՈՒԿՈՎ.—Փայնքոտ:

ՎԱՍՅԱ.—(Վագում է սենյակում) Վարվարա Իվանովնա, չեմ կարող համբերել... Իմ ձեռքը ինքն իրեն բարձրանում է դեպի նրա դուռնը...

ՎԱՐՎԱՐԱ.—Դե բավական ե... Դրողը ձեզ տանի, վճիռեղ եք գտնվում: Շուկայում: Դժբաղդ աղմկաբարներ:

ՎԱՍՅԱ.—Ցեա աղմկաբար չեմ... աղմկաբարը նա չե.

ՎԱՐՎԱՐԱ.—Վերջապես լուրջ չես, թե վոչ: Ընկերներ, սա մեր վերջին նիստն է... Սա նիստ է միթե, ընկերներ:

ՎԱՍՅԱ.—Վերջացնել հետաձգել:

ՎԱՐՎԱՐԱ.—Կարելի չկա հետաձգելու: Նախապատրաստական աշխատանքը, Ալեքսեյ, վերաբերելու չե ամեն ինչի: Կգա յեր-րորդ սենյան, նոր մարդիկ: Հարկավոր են նոր բնակարաններ, ճաշարաններ, կոոպերատիվ, մսուր... Դպրոց ե հարկա-վոր... Հիվանդանոց: Բանվորների ընտրություն ենք անե-լու, վորակավորելու չենք, ով անհամապատասխան է—դուրս: Պուլ է, պրոդուկտի է, խուլիգան է—կորչի: Շատ մարդ հարկավոր կլինի: Գործադրությունը կվերացնենք:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Այդ ձևով չես վերացնի:

ՎԱՐՎԱՐԱ.—Կվերացնենք. հազար մարդ է հարկավոր: Ստանդ-ները գիշեր ցերեկ կբանեցնենք:

ՄԻՆԻԿՈՎ.—Արտադրություն ավելանալով կիջնի գները: Ցեմ չթի ու այլ բաների պատճառով գյուղացու հետ միմիանց չենք հայհոյի... Շուտով մենք բոլոր ֆաբրիկաներն ու գործարան-ները յոթ ժամի կփոխադրենք... Ահա: Հնգամյակը լուրջ բան է: Ճշգրիտ պլան, պետական:

ՎԱՍՅԱ.—Հապա կուլտուրական ֆրոնտը: Հապա հարվածային բրիգադները: Արշավի դուրս կգանք, թող արտադրական հանձնաժողովը ծավալի աշխատանքը, հատուկ ուշադրու-թյուն դարձնի բանվորների առաջարկներին, վորպեսզի բո-լորին ներգրավի, վորպեսզի տղաները չքնեն:

ՎԱՐՎԱՐԱ.—(Խիստ հուզված. նրա խոսքերը հասցանում են յեմ հա-մոգի) Ճշմարիտ է, Վասյա: Մեր գործն է դա, ընկերներ... Հարազատ, իսկական... Ցեմ մենք պետք է լրիվ արդյունքի:

հասնենք: (Կոյուկովին, սիրալիր) Թող, Ալեքսեյ: Ստորագրել ենք—վերջացավ: Թղթերը կուղարկենք կենտրոն, մեկ-յերկու որ կհանգստանանք ու գործի կանցնենք... Դե սա ի՞նչ բան է իսկապես:

ԿՐՅՈՒԿՈՎ.—(Նույն զայով) Ցեա, վորպես գործարկումի նախագահ, տեսնում եմ, վոր գործը չի գնա: Հարկավոր է յուրաքան-չյուրին հարյուր տոկոսով նախապատրաստել: Իսկ ներկա դրույթամբ շատերը կառարկեն:

ՄԻՆԻԿՈՎ.—(Լաբելով ուժադրությունը) Շատերը:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Դե, ի հարկե... Վորին հույս կտրվի. վորը փողոց կնետվի. և ահա, նշանակում է, կսկսվեն խոսակցություններ ու նման բաներ:

ՎԱՐՎԱՐԱ.—(Բարբոսովելով) Ստում ես: Ժշտ չե: Ովքեր են դրանք, վոր դեմ են: Ո՛ւր են նրանք: Ցույց տուր: Ի՞նչդ ես հեա-րել:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Դու մի բղավիր: Ցեա քո յերեխան չեմ:

ՎԱՐՎԱՐԱ.—Ական առաջ փայտ ես գցում... Այդպիսի բան չկա: Չեմ հավատում:

ՄԻՆԻԿՈՎ.—Որ-ո՛ր-ո՛ր... Կրկին սկսվում է... Չեմ կարող չես հուզվել: Իբրավունք չունեմ չես հուզվելու... Ահա: Իմ սիրտը հիվանդ է, չես վաղուց պիտի քնած լինեյի...

ԿՐՅՈՒԿՈՎ.—Այ, հրեն Ֆեոդորն ել է կասկածում:

ՎԱՍՅԱ.—Ցեա: Դե, դու արդեն... Ո՛վ ասաց քեզ:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ինձ ելիր ասում.—հարկավոր է մտածել, ձգձգել:

ՎԱՐՎԱՐԱ.—Խճճվել ենք: Ցերեկում է, լուսադեմի մոտ ուղեղներս զազարել է աշխատելուց, ընկերներ: Սկսում ենք միմիանց վրա գցել... Ցեա ասում եմ—կհասնենք: Ցեա ասում եմ—դա մեր պարտքն է: Ցեմ—վերջացավ: Ժամանակ է վերջակետ գնելու. Բվեարկենք:

ՎԱՍՅԱ.—Բվեարկենք:

ՎԱՐՎԱՐԱ.—Ցեգոր Սերգեյիչ. դրեք հարցը վորոշակի:

ՄԻՆԻԿՈՎ.—Հըմ... ո՛ր-ո՛ր... Ահա: Յոթամյա բանվորական որ-վա անցնելու թեորեաիկ նախապատրաստությունը համա-րել վերջացած... Որ-ո՛ր-ո՛ր... Համարել. վոր մեր «կարմիր շող» գործարանը կարող է սկսել անցնել աշխատանքի նոր, կրճատված որվա...

ՎԱՍՅԱ.—Ստորագրում եմ... Վարվարա Իվանովնա, վճիռեղ ստո-րագրել: Կոմյերիտմիությունից, Վասիլ Ռումյանցեվ:

ՎԱՐՎԱՐԱ.—Շատ լավ: Հիմի լես:
 ՄԻՆԻԿՈՎ.—(Գրում է) Յեզոր Միլնիկով, ավագ ճարտարագետ.
 ստորագրեցի... ռխ-ռխ... շուտով կպայթեմ լես:
 ՎԱՍՅԱ.—(Կրկնովի) Ստորագրիր, Ալեքսեյ:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Ինքը ստորագրիր:
 ՎԱՍՅԱ.—Ինչ կա վոր, կստորագրեմ: Արտագրական հանձնա-
 ժողովի անդամ Ֆեոդոր Վլասև:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Հատուկ կարծիքի:
 ՎԱՐՎԱՐԱ.—Ե՛խ դու—հատուկ: Վատ է, լեղբայր, լերբ հատուկ է:
 ՎԱՍՅԱ.—Ձի կարող լինել հատուկ կարծիք: Ստորագրութունը
 մենակ մեր կողմից չէ: Յեզոր Սերգեյիչը ստորագրեց ամբողջ
 տեխնիկական մասի կողմից: Բոլորս աշխատել ենք, բոլորս
 շահագրգռված ենք: Դու գրիր այո, թե վոչ: Այդպես ավելի
 վորոշ կլինի:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Վոչ... Առայժմ վոչ:
 ՎԱՍՅԱ.—Ե՛հ, գրողի ծոցը: Մեծամասնությամբ ընդունված է:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Յես քո դեմ բ՛լիջ կգնամ: Կուլտուրայի մասին ես
 բարբառում, բայց ինքդ ամենամեծ հայհոյողն ես:
 ՎԱՍՅԱ.—Լավ: Միասին գնանք: Կխոսենք:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Աղմուկի դուռ բացեցիր: Հիմի տնքոցն աշխարհ կը-
 վերցնի: Կսկսվի գտնում:
 ՎԱՐՎԱՐԱ.—Յեթե վոմանց անգամ դա են—հանցանք չէ: Սակայն
 քանի հոգի կուշտ կլինի:
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Բայց և այնպես վերջում պիտի ասեմ, վոր դու,
 Վարվարա, դիրեկտոր դառնալուց հետո սկսել ես ուրիշ լե-
 գու բանեցնել: Տես, կփռչմանես:
 ՎԱՍՅԱ.—Յես թեև չեմ խառնվում, բայց թերևս... նա թերևս
 իրավացի չեմասամք: Դիրեկտորական տեղը պետք է բարձր
 պահել:
 ՎԱՐՎԱՐԱ.—Ինչ է դա: Ինչե՛ր եք ասում: Յես չեմ ինձ նշանա-
 կել... Ինչո՞ւն է իմ հանցանքը:
 ՄԻՆԻԿՈՎ.—(Կամենալով վեր կենալ) Դե, բավական է կովեք:
 Ռխ-ռխ... փակում ենք ժողովը... ահա... և տուն...
 ԿՐՅՈՒԿՈՎ.—Մնաք բարի: (Ընդուն հեռանում է):
 ՎԱՍՅԱ.—Տեսա՞ք: Վճիռն է:
 ՄԻՆԻԿՈՎ.—Շուտ վերավորվող ե... ռխ-ռխ... Վոչինչ, կսառչի...
 Բնավորութունն է այդպես... վոչինչ, պատահում է... Ահա...

չես ել գնացի... (Կրկին ուզում է վեր կենալ) Ռխ-ռխ-ռխ...
 չեմ կարողանում:
 ՎԱՐՎԱՐԱ.—Վտաքերդ թմբել են:
 ՄԻՆԻԿՈՎ.—Ուռչում են անիծյալները... սրտից է...
 ՎԱՍՅԱ.—Այո, դու նստեցինք: Արդեն...
 ՎԱՐՎԱՐԱ.—Առավոտ է:
 ՎԱՍՅԱ.—Նախահաշիվները և պլանները լավ պահիր: Յտեսու-
 թյուն, ընկերներ:
 ՎԱՍՅԱ.—(Փնտրում է գլխարկը) Ո՛ւր է իմ գլուխը:
 ՄԻՆԻԿՈՎ.—Գլխարկդ կորցրել ես: Ահա թեյնոցի վրա:
 ՎԱՍՅԱ.—Թ՛ու, սատանա, ուր է թուել: Նայում եմ ու չեմ տես-
 նում: Այս գիշեր, Յեզոր Սերգեյիչ, նույնիսկ իմ բոլոր հյու-
 թերը քամվեցին:
 ՎԱՐՎԱՐԱ.—Թույլություն ես հայցում:
 ՎԱՍՅԱ.—Վոչ թե թողութուն, Վարվարա Իվանովնա, այլ ուտել:
 Հենց վոր ժողով է լինում, հասկանում եք, գայլի ախորժակ
 եմ ունենում:
 ՄԻՆԻԿՈՎ.—Յերիտասարդներ, քուռակներ, վազան ձիեր:
 ՎԱՍՅԱ.—Ո՛վ, մե՛ք:
 ՄԻՆԻԿՈՎ.—Այո, վոչ մենք: Մենք հրաժարեցրած ենք, անպետ-
 քություն. իսկ ձեզ համար ընդարձակ ճանապարհ է բացվում:
 ՎԱՐՎԱՐԱ.—(Փնտրելով պահարանում, մի կտոր հաց է տալիս Վաս-
 յային) Հյուրասիրվիր:
 ՎԱՍՅԱ.—(Հացը կոխելով բերանը) Այ, շնորհակալ եմ:
 ՄԻՆԻԿՈՎ.—Դե, ժամանակ է, (Ծանր բարձրացնում է սեղից) Պարզ
 առավոտ ե... ռխ-ռխ... Ձեր ձեռքը, Վարվարա Իվանովնա:
 ՎԱՐՎԱՐԱ.—Ինչ կարիք կա հրաժեշտ տալու, շուտով տեսնվելու
 ենք:
 ՄԻՆԻԿՈՎ.—(Պահելով նրա ձեռքը) Մի վհատե՛ք... Համարձակու-
 թյունը, ասում են, քաղաքներ է գրավում: Պատանի, ու-
 ղեկներ ինձ մինչև իմ բնակարանի դուռը... իմ վտաքերը...
 ռխ-ռխ-ռխ...
 ՎԱՍՅԱ.—Գնանք
 ՄԻՆԻԿՈՎ.—Յե՛վ այդպես, — դեպի նոր ճանապարհ:
 ՎԱՐՎԱՐԱ.—Այո, չեմ վորպեսզի շպալները փթած չլինեն, այ
 նույնպես նոր ու ամուր: Շպալներն են ամբողջ ճանապարհը
 պահողը:

ՄԻԼՆԻԿՈՎ.—Լավ ե ասված: (Բարձրացնում է մասք յեվ հանդիսավորապես արտասանում) Նոր շապուհներ... Շատ լավ ե:

ՎԱՍՅԱ.—Լավ ե, ինչ ասել կուզի:

ՄԻԼՆԻԿՈՎ.—Սքանչելի ժամանակ ե: Յես այդ բանը հիմի ձեռքերում կարդացի, ընկեր դիրեկտոր:

ՎԱՐՎԱՐԱ.—Ե, իմ աչքերն քնկոտ են ու կարմրած:

ՄԻԼՆԻԿՈՎ.—Նշանավոր ժամանակ ե: Դուք, Վարվարա Իվանովնա, ունիք ենտուզիազմ, ինչպիսի ստեղծագործական ուրախություն ե դա, զգում եմ, մասսայից ե դալիս, ձուլված ե բոլորի հետ: Յես, ծերուկս, չտեսած բաներ եմ տեսնում... Ձե, մենք դեռ կապալքարենք, յես դեռ չեմ պայթի: Դե, առաջնորդիր, ինձ, պատանի (Յերգում ե) «Մենք յերիտասարդ գվարդիա յենք»...

ՎԱՍՅԱ.—(Թեկնցունկ արած նրան, խնամով առաջնորդում ե): Այստեղ ահա շեմքն ե...

ՎԱՐՎԱՐԱ.—(Նրա յեսելից) Յեզոր Սերգեյիչ, լավ կլինի այսոր տասնմեկերորդ ստանդը ստուգեք: Հենքը կտրում ե:

ՄԻԼՆԻԿՈՎ.—Լսում եմ... ռի, ռի... (Շարունակում ե յերգել)... «Բանվորների ե գյուղացիների»... (Գնում են):

Վարվարան միայնակ ե: Մի բանի վարկյան կանգնած նայում ե լուսամուտից դուրս: Իսկ լուսամուտում ավելի ու ավելի բացվում ե առավոտը:

Ներս ե գալիս Ակուլինան:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Վերջացրի՞ք, ինչ:

ՎԱՐՎԱՐԱ.—Ա... Այդ դու յես, Ակուլինա:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Վերջացրի՞ք հարցնում եմ:

ՎԱՐՎԱՐԱ.—Վերջացրինք:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Վաղուց հարկավոր եր... Վորտեղ ե տեսնված մինչև առավոտ նստել: (Մոտենում ե յեվ շուրջը նայելով, զգուշորեն շեցում) Մի հավատա դու նրան... Լսիր, մի հավատա...

ՎԱՐՎԱՐԱ.—Ո՛ր:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Նրան:

ՎԱՐՎԱՐԱ.—Ախր ո՛ւմ: Ինժեների՞ն:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Ձե... մարդուդ, ահա թե ում:

ՎԱՐՎԱՐԱ.—Ելի՞ հիմարություններ:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Դու խոսքս լսիր... զրուստ եմ ասում:

ՎԱՐՎԱՐԱ.—Ձեմ սիրում բամբասանք:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Վերավորական խոսքեր ես ասում, Վարյա: Ձգու-

շացնել եմ ուզում քեզ, ոգնել... Լավ չի. ամոթ ե, ուրիշները չարախոսում եմ, անունդ ցեխի մեջ տրորում...

ՎԱՐՎԱՐԱ.—Դա ամենեին քո գործը չի:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Յես կույր չեմ, խուլ չեմ... քուես չի տանում...

դուք այստեղ կոկորդ եք պատում, իսկ իմ քունը չի տանում: Յես լսում եմ... Պահպանում եմ... Ամբողջ գիշեր եմ լրբի հետ եր... Մենակ ես գիշեր չի...

ՎԱՐՎԱՐԱ.—Յես խնդրում եմ քեզ... Չհամարձակվես այդ մասին հայտնել:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Եխ, դու, հավատացող...

ՎԱՐՎԱՐԱ.—Վերջ տուր:

ԱԿՈՒԼԻՆԱ.—(Շեցում ե ռապ, վախենալով, վոր իրեն կարգելեն, բույլ չեն տա վերջացնի) Քաշ ե դալիս... վոնց ե քաշ դալիս... նրան ել իրենց ճանկն են գցել... խմացնում են... Ամեն որ քեֆ—ուրախություն են տեսնում, այնպես, վոր մուխը յերկինք ե բռնում... Դու չես տեսնում, իսկ յես գիտեմ... Փյոդոր Վլասյովի քույրը—Լիզան: Յեվ ինչպե՞ս Սանփանիչը չի ամաչում, թույլ ե տալիս, վոր իր քույրը ամուսնացած մարդու հետ ընկնի...

ՎԱՐՎԱՐԱ.—Ձեմ ուզում այդ մասին իմանալ, Ակուլինա, ամոթ ե, ծեր կին ես:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Պայտառակություն ե ախր: Մարդիկ ծիծաղում են: Մարդիկ աչքերը չորս արած հետևում են... Թե ես ինչեք են կատարվում գիրեկտորի ընտանիքում: Բա հատյուշան, կարծում ես չի՞ տեսնում:

ՎԱՐՎԱՐԱ.—Ձեմ հավատում: Դե բավական ե... Ձանձրալի յե:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Ձգուշացիր... Լսիր, քու տեղը պատասխանատու տեղ ե, լուրջ տեղ ե... Լսիր Վարյա:

ՎԱՐՎԱՐԱ.—Հեռացիր... Հիմա դործարան պիտի դնամ: Ուժ չունեմ: Ուզում եմ մի բոպե հանգստանամ... Իսկ դու... (Բաց ե անում լուսամուտը, լիարժեք շեցում ե): Լավ ե:

Լուսամուտից լսվում ե տղամարդու ծիծաղ յեվ կանացի քմծիծաղ: Վարվարան ակամայից յետ ե քաշվում լուսամուտից: Անողնական նայում ե Ակուլինային:

ԱԿՈՒԼԻՆԱ.—(Շուկով) Նրանք են...

ՎԱՐՎԱՐԱ.—(Կրկնում ե)—Նրանք են:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Նրանք են:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Ուրեմն...

ՄԿՈՒԼԻՆԱ.—Ձուտ ճշմարտություն, Վարվարա, չես քեզ սուտ չեի ասի:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Սա ի՞նչ բան է:

ՄԿՈՒԼԻՆԱ.—Լրբություն եմ անում, ոձի ճուտերը: Անամոթներ:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Սուս... Իսկույն հեռացիր... Թող ինձ: (Ծանր բնկնում է լուսամուտի մոտ արտոնք)

ՄԿՈՒԼԻՆԱ.—Հիմա համոզվեցի՞ր: Ավելի վաժառ է խավարի մեջ (խարխալել... Գնամ: Գնում է վոսֆեր ֆոֆելով յեղ ֆրսմնջելով) Ու, չար դեմքեր:

ՆԻԿՈԼԱՅԻ ԶԱՅՆԸ.—(Ծորուն) Լիզա, Լիզավետա, Լիզավետա:

ԼԻԶԱՅԻ ԶԱՅՆԸ.—Ուխ, ինչպե՞ս ես համբուրում ես յոյս: Վարվարան բարձրանում է, սեղմվում պառնիս: Առավոտն ավելի յե պարզվում: Դուռը թափով բացվում է: Ներս է գալիս Նիկոլայը: Վարվարան ցնցվում է: Նրանք նայում են միմյանց:

ՆԻԿՈԼԱՅ.—(Պառկայից հետո) Ձեռքներ (Վարվարան լուռ է: Նիկոլայը դեն է նետում գլխարկը: Նրա շարժումները դիտարկող աղմկայից են): Ձեռքներ, ասում եմ:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Յեթե սոված ես, նախասենյակում կարտոֆիլ կա, բայց հաց չկա:

ՆԻԿՈԼԱՅ.—Ինչո՞ւ չես բարկացած:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Լուսանում եմ:

ՆԻԿՈԼԱՅ.—Ի՞նչ անենք:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Վոչինչ: (Նիկոլայն ուզում է ծխել) Ծխիր դուրսը: Տեսնում ես, ծխով լիքն է: Մաքրում եմ:

ՆԻԿՈԼԱՅ.—Իսկ ընտանեց կարելի՞ յե: Կրկին ժողով: Կեղտոտել ենք իսկ մեղավորը յեա եմ:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Վոչ վոք քեզ չի մեղադրում:

ՆԻԿՈԼԱՅ.—(Ծխելով): Մի ուրիշ տեղ հավաքվեցեք: Կարիք չկա խժկվել ուրիշ տանը:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Ինքդ իմանում ես, վոր շինարարություն է գնում, վերանորոգություն է կատարվում, իսկ այստեղ խաղաղ է, կարելի յե գրչերը աշխատել: Ավելի լավ է քեզ հետեա:

ՆԻԿՈԼԱՅ.—Քո գործը չե:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Ամբողջ գրչեր թրե ես եկել, հարբել ես: Ինչ դուրս թյամբ պիտի աշխատանքի գնաս:

ՆԻԿՈԼԱՅ.—Այս, դուրս թյամբ:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Ո՞ւմ է հարկավոր այդպիսի աշխատանքը:

ՆԻԿՈԼԱՅ.—Մեծ բան է ելի:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Ամաչի՛ր: Որինակ դառնալու փոխարեն քաջացվում ես: Բանի՞ պրոգնոզ ունես այս ամիս: Հիշիր: Կարծում ես վոչ վոք չի՞ նկատում այդ:

ՆԻԿՈԼԱՅ.—Վորպես դիրեկտոր ես խոսում: Գուցե կկրճատես պրոգնոզի և հարբեցողության համար:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Յեթե քեզ այդպես պահես, պարզ է, հարկավոր չես: Խնամություն չեմ անի:

ՆԻԿՈԼԱՅ.—Սպանո՞ւմ ես: Տե՛ս, Վարյա:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Ի՞նչ տեսնեմ, տեսնում եմ:

ՆԻԿՈԼԱՅ.—Յես ել եմ տեսնում, թե դու ի՞նք տեսակ դիրեկտոր ես:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Հիմար-հիմար դուրս մի տուր: Քնիր, վաղը լուրջ կխոսենք:

ՆԻԿՈԼԱՅ.—Ուզում ես հիմա խոսենք...

ՎԱՐՎԱՐԱՆ.—Վաղը կխոսենք:

ՆԻԿՈԼԱՅ.—Ինքդ սխեցիր, ուրեմն շարունակիր:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Խոսելու ժամանակ չե: Բոպեն չար է, Նիկոլայ:

ՆԻԿՈԼԱՅ.—Ձե՛ր է: Այդ ինչո՞ւ:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Պետք է ուշքի գալ, Նիկոլայ, հիմարությունները թողնել:

ՆԻԿՈԼԱՅ.—(Հանկարծ ձեռք սեղանին խփելով) Թույլ չեմ տա:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Դժվեցիր ինչ է:

ՆԻԿՈԼԱՅ.—Թույլ չեմ տա իմ գործերին խառնվել:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Մի բղավիր: Կատալիս կարթնացնես:

ՆԻԿՈԼԱՅ.—Ուզում ես կանտորի տնիկ պահել: Առաջվա նման սանձ դնել: Բոլորովին դադել ես... Կրչուկովին հանդիպեցի իրեն կորցրել ես... բարկացրել եյիք տղային:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Ձի հասկանում, դրա համար ել բարկանում ե:

ՆԻԿՈԼԱՅ.—Բոլորին, ասում եմ, դադել ես... Յես քեզ կրճատել ցույց կտամ: Փառքիկանտներին եք միտ գցել: Ձեզ թողնեն: Մարդկանց մուրացկան դարձնեք, տալրա՛կն ուսերին վողորմություն խնդրեն: Այդ տեսակի քաղաքականության դեպքում վոչ վոք չի աշխատի:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Կգտնվեն:

ՆԻԿՈԼԱՅ.—Յես առաջինը չեմ աշխատի:

ՎԱՐՎԱՐԱՆ.—Մի աշխատիր: Դա քո գործն է:



ՆԻԿՈԼԱՅ.—Ա... Ահա թե ուր ես ծնունդ առաւ։ Այդ չի լինի։ Դուրս
կապրանք։ Դեպքով վեր կըսենք ու մազութ կըսենք։

ՎԱՐՎԱՐԱ.—Ինչեւր ես դուրս տալիս։ Բեզ լինչ ե պատահել։
Վորտեղից դու հանկարծ ալդպիսի խոսքեր սովորեցիր։ Նա-
յում եմ քեզ—ե ճանաչել չեմ կարողանում... փոխվել ես...
Խմում ես, խուլիգանութիւն ես անում։ Ռոճիկիցդ վոչինչ
տուն չես բերում։ Քո փողը հերիք չի անում, իմն ել ես
վերցնում։ Ուզում եյի Կատյուշայի համար վերաբերու ե կո-
չիկներ գնել—ստիպված յեղա քո պարտքերը վճարել։ Իմ
մասին ել չեմ խոսում։ Քո մեջ առաջվանից վոչինչ չի մնա-
ցել։ Դատարկ տեղ։ Դեմքդ ել ուրիշ ե։ Զգվելի յե։

ՆԻԿՈԼԱՅ.—Յես քեզ չեմ վիրավորում, դու չիլ ինչ հանգիստ թող։

ՎԱՐՎԱՐԱ.—Բայց կար ժամանակ, Նիկոլայ, հիշիր... Քո մեջ կար
ե ուժ, ե հետաքրքրութիւն... Աշխատում եյիր, գլուտեր
եյիր անում։ Ինչ տեխնիկ դուրս կգար քեզանից։ Յերը առաջ
քաշեցին դիրեկտորութեան, ուրախացար, բայց հետո...

ՆԻԿՈԼԱՅ.—Ի՞նչ հետո։

ՎԱՐՎԱՐԱ.—Հեռացար... Ուրիշ մարդկանց հետ կապվեցիր... Վատ
մարդկանց հետ... Իսկ յես մնացի մի կողմ։

ՆԻԿՈԼԱՅ.—Դու չիլ առաջ տանն եյիր նստում, իսկ հիմա գնա
ու քեզ գաիր։

ՎԱՐՎԱՐԱ.—Ձե վոր գործով, աշխատանքով եմ զբաղված, Նի-
կոլայ։

ՆԻԿՈԼԱՅ.—Ո՞վ գիտե։ Դու վոր տանը չես,—յես ել տանը գործ
չունեմ։

ՎԱՐՎԱՐԱ.—Ձե վոր մեր շահերը մեկ են։ Միթե յես քո կարծի-
քով խոհարարուհու նման պիտի նստեմ տանը ե ամանները
վաճառ։

ՆԻԿՈԼԱՅ.—Միտոս նեղվում ե, ահա ինչ։ Տախտակալի յե։

ՎԱՐՎԱՐԱ.—Իսկ ինչո՞ւ ես խմում։ Ելի՞ յես եմ մեղավոր։

ՆԻԿՈԼԱՅ.—Գուցե ե դու։

ՎԱՐՎԱՐԱ.—Ուշքի յեկ։ Մտածիր։ Մեր կյանքը խորտակվել ե։
Հասկացիր։ Վիրավորական ե Նիկոլայ... Յեթե դու ոտաբ
լինելիր, թե չե ախր... Բառ չեմ գտնում... Ինչու... Ինչո՞ւ
դու, Նիկոլայ, կապվել ես Յելիզավետայի հետ։

ՆԻԿՈԼԱՅ.—Եղպես բան չկա։ Բայց Յեթե դու Յելիզավետային...
Տես...

ՎԱՐՎԱՐԱ.—Ստոր... Գիշերները թրե ես գալիս, հետո գալիս ես
յերեսալի մոտ։ Գուցե դու արդեն տունը վաճակել ես։

ՆԻԿՈԼԱՅ.—Անգղամ ես դու, ալգպիսի խոսքերից հետո։
(Դռնելում յերեկում ե Կատյան։ Վերարկուն ուսերին
զցած, լսում ե)։

ՎԱՐՎԱՐԱ.—Գնա քնիր։

ՆԻԿՈԼԱՅ.—Ձեա կարողանում պատասխանել։ Սպասիր ուրեմն,
յես քո հախից կգամ։

ԿԱՏՅԱ.—(Վազելով դեպի հայր)։ Պապա, ինչպես ես դու... Ին-
չո՞ւ յես գոռում մայրիկի վրա։

ՆԻԿՈԼԱՅ.—Մի խցկվիր։

ԿԱՏՅԱ.—Իսկ դու... Ինքդ ես մեղավոր։ Յես ել քո մասին շատ
բան կարող եմ պատմել։ Քո պատճառով յես ամոթանք եմ
կրում ատրյադում, տղաների մոտ։ Տղաները վրադ ծիծա-
ղում են։

ՆԻԿՈԼԱՅ.—Կորի։

ՎԱՐՎԱՐԱ.—Կատյա, հանգիստ թող հորդ։ Ինչո՞ւ ես վեր կացել։

ԿԱՏՅԱ.—Բա նա ինչու յե հարբում։ Բոլոր տղաներին կգրգռեմ
դեմդ...

ՆԻԿՈԼԱՅ.—Ահա թե ինչ են սովորեցնում ձեզ, ոճի ճուտերիդ։
(Հռում ե Կատյային)։ Սպասիր, կխրատեմ, կփափկես։

ՎԱՐՎԱՐԱ.—(Սպառնական) Հեռացիր անմիջապես։

ՆԻԿՈԼԱՅ.—Խոսք մեկ եք արել։ (Դնում ե դեպի դուռ)։ Թույլ
չեմ տա ինչ վրա իշխել։ (Հեռանում ե դուռը օրվալացնելով)։
Կատյան արտասովում ե։ Վարվարան իրան հանգրս-
տացնում ե։

ՎԱՐՎԱՐԱ.—Լաց մի լինի... Դե բավական ե...

ԿԱՏՅԱ.—(Հեծկլում ե) Ձեմ կարող... յես հորս հարբած տեսներ։

ՎԱՐՎԱՐԱ.—(Փաղափելով Կատյային) Դադարիր։ Հտնդատացիր։

ԿԱՏՅԱ.—Մայրիկ...

ՎԱՐՎԱՐԱ.—Ի՞նչ։ Դե լաց մի լինիր... Դպրոց ես գնալու։

ԿԱՏՅԱ.—Իսկ դու գործարան։

ՎԱՐՎԱՐԱ.—Յես մեծ եմ։

ԿԱՏՅԱ.—Յես ել մեծ եմ։

ՎԱՐՎԱՐԱ.—Դու հիմար ես։

ԿԱՏՅԱ.—Յես վաղուց-վաղուց քնացած չեմ։ Լսում եմ։ Իմ լու-
սամուտի տակ հայրիկն ու Լիզան ծիծաղում եյին... Յես
ճանաչեցի Լիզայի ձայնը... Ձեմ սիրում յես նրան... Շատ...

ՎԱՐՎԱՐԱ.—Քեզ թվացել է: Պարզիր իմ սենյակում: Դուցե քե-
սես:

ԿԱՏՅԱ.—Մայրիկ, ինչո՞ւ նա այդպես է:

ՎԱՐՎԱՐԱ.—Զգիտեմ:

ԿԱՏՅԱ.—Նա մեզ չի սիրում:

ՎԱՐՎԱՐԱ.—Ինչե՞ր ես ասում: Դե, բավական է...

ԿԱՏՅԱ.—Ինչո՞ւ նա այդպես է: Ինչ վատ է ինչպիսի: Հենց ես ե-
ռզում եմ մոտենալ ու թքել լերեսին... Դու լաց ես լինում
մայրիկ:

ՎԱՐՎԱՐԱ.—Յես լաց չեմ լինում... Աչքերս ցավում են... Ար-
դեն լույս է:

Դործարանի շահ: Յերկուսով ել ուշադիր լսում են:

ԿԱՏՅԱ.—Մի գնա... ժամանակ կա...

ՎԱՐՎԱՐԱ.—Հիմարություն ես դուրս տալիս: (Հագնվում է,
պահուստիկով գնալու է):

ԿԱՏՅԱ.—(Վ.ՅՏՏ) Մի գնա:

ՎԱՐՎԱՐԱ.—Դե հերիք թնդթնգաս:

Կրկին շահ: Լուսամուտում յերեվում է Մաշայի
գլուխը:

ՄԱՇԱ.—Վարվարա Իվանովնա, ժամանակ է վերկենալու:

ՎԱՐՎԱՐԱ.—Դալիս եմ, Մաշա:

ՄԱՇԱ.—Դե դա, խոզություն է: Ել ինչու էք պատվիրում ձեզ
արթնացնելու: Ասում եք, ուշ եմ քեռ, բայց արդեն
վտաքի յեք:

ՎԱՐՎԱՐԱ.—Մենք այս գիշեր չենք ել պառկել: Ժողով եր:

ՄԱՇԱ.—Յոթ ժամի մասին: Վաչսկա Թումյանցեվը, Վարվա-
րա Իվանովնա, գոված է եղ բանի վրա: Ծշմարիտ:

ՎԱՐՎԱՐԱ.—Գոված է:

ՄԱՇԱ.—Հա: Մոտենալ չի լինում: Կծում է: Մենք, բղավում ե-
կհասնենք... Յեվ հնպես է վրա տալիս, վոր ուղղակի վա-
խենալու է:

ՎԱՐՎԱՐԱ.—Տաք գլուխ ունի: Ինչո՞ւ յես դողում կատյուղա:
Ցուրտ է:

ԿԱՏՅԱ.—Ցուրտ է:

ՎԱՐՎԱՐԱ.—Լուսամուտը փակիր, փաթաթվիր, կտաքանաս:

ՄԱՇԱ.—Յես ձեզ, Վարվարա Իվանովնա, դուրս նստա-
րանի վրա կապանեմ: Սքանչելի առավոտ է: (Անհայտանում
է լուսամուտի յեսիվ: Վարվարան քրթեր գնում է պահեստի-
կի):

ՎԱՐՎԱՐԱ.—Դպրոցից չուշանաս, աղջիկս: Ահա քեզ 10 կոպեկ
բուլկի կառնես:

ԿԱՏՅԱ.—Բա հա՞:

ՎԱՐՎԱՐԱ.—Նա՞ (Մի ակնբարձ մտախոհ): Թող քնի, Կատյա:
Նա իր ժամանակը է իր հոգսերն ունի. (Գնում է):

ԿԱՏՅԱ.—(Լուսամուտի մոտ քափահարում է ձեռքը): Մայրիկ ցը-
տեսություն:

Բոլորովին լույս է: Հսկում է ստանդինների աշխա-
տանքիադմուկը: Սկսվում է բանվորական որը:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Նույն սենյակը: Յերեկոյն Միլենիկովը գլխարկը ձեռքին, կանգնած է դռներում: Վարվարան կապում է թաշկինակը:

ՎԱՐՎԱՐԱ.—(Ուռախ զնգուն) Իսկույն, իսկույն, Յեգոր Սերգեյիչ: Միլենիկով.—Հանդարտ: Ամուսնուդ կարթնացնես:

ՎԱՐՎԱՐԱ.—Նրան շշակն ել չի արթնացնի,

Միլենիկով.—Ոխ, ես կանաչք: Շարունակ ընքնում եմ:

ՎԱՐՎԱՐԱ.—Դե չես ել ինչ կին եմ: Յեգոր Սերգեյիչ: Այս րոպե-
յիս... փողը չմոռանամ: Կոպեքատիվում կտրագ են ստա-
ցել:

Միլենիկով.—Իմ գրքույկը ձեզ մոտ է, Վարվարա Իվանովնա,
ինձ համար ել վերցրեք:

ՎԱՐՎԱՐԱ.—Լավ: (Փնտրում է դռանը սեղանի սիւղոցի տակ, բարձի տակ): Վարտեղ եմ դրել: Այ քեզ հիշողութուն: Այսօր, Յեգոր Սերգեյիչ, առանձնահատուկ ուր ե: Մեր բոլոր պա-
տրաստությունները վերջացած են: Հասցրինք, Յեգոր Սեր-
գեյիչ, ճիշտ ժամանակին հասցրինք: Բայց վոր ուշացրել
էինք, լավ չեր լինի, Վերջին թուղթն ել կթելադրեմ մե-
քենագրունուն, իսկ վաղը—կուղարկենք: (Միծաղում է):
Այսօր տոավորտից սկսած, ինձանից յերջանկությունը թափ-
վում է:

Միլենիկով.—Ինչ եք շարունակ պատվում իլիկի նման:

ՎԱՐՎԱՐԱ.—(Միծաղում է) փողը չեմ գտնում: Միտոս է վոր սը-
փուցի տակ եմ դրել...

Միլենիկով.—Եխ, դու... Անտոնեսվար հասարակական գործիչ:

ՎԱՐՎԱՐԱ.—Յեգոր Սերգեյիչ, մենք այնպես ել կանենք, ինչպես
վորոշել ենք: Վարակավոր բանվորուհիներին 'կողմնակի
աշխատանքից կազատենք: Մենք նրանց հարվածային բրի-
գադի մեջ կգրավենք: Թող արտադրական հանձնաժողովին
առաջարկությունների տակ խեղդեն:

Միլենիկով.—Այո, նրանց դործը չի հատակ մաքրելը... Սպա-
սեցեք մենք մեր արտադրական նիստերում շատ բան բա-
րեփոխության կցենթարկենք: Փողը գտմը:

ՎԱՐՎԱՐԱ.—Վոչ... Սպասեցեք, թե չե կմոռանամ: Վատերշչիցա-
ներին կթողենք թել քաշելու և չորացնելու գործին: Նը-
բանք վեցհարյուր մաքրքի տեղ հաղար վեցհարյուրը կըսպա
սարկեն: Իսկ չեք յերեք ստանոկից կանցնենք չորսի, այն
ժամանակ հսկայական արդյունք կստացվի: Մրցությունը
կողնի, վոր բոլորը շահագուզվեն:

Միլենիկով.—Ընկեր դիրեկտոր, պրծեք վերջապես:

ՎԱՐՎԱՐԱ.—(Ինչ վոր հիշելով ավստոսնով) Փողը չկա... կտրավ
մեր կարագը:

Միլենիկով.—Յոթ ժամի անցնելու համար եք աշխատում, բայց
ձեր տնտեսությունը քայքայում եք: Այդպիսով հո ընտա-
նեկան կոնֆլիկտ կառաջանա:

ՎԱՐՎԱՐԱ.—Փող կար, բայց այլևս չկա... Վերցրել են... Դե լավ:
Կարիք կլինի նորից ինժեներ Միլենիկովին թախանելու:
Ոյ, ոյ, յես ձեզ արդեն քսանհինգ մանեթ պարտք եմ:

Միլենիկով.—Գնանք: Յես շան նման հոգնած եմ և թեյ չեմ
ուզում:

ՎԱՐՎԱՐԱ.—Գնացինք:

Մտնում է Ակուլինան

ՎԱՐՎԱՐԱ.—Ակուլինա, յես շուտով կվերադառնամ (Գնում է):

ԱԿՈՒԼԻՆԱ.—Թեկուդ բոլորովին ել մի վերադարձիր:

Միլենիկով.—Ոխ, շատ լուրջ պառավ ես: Իսկ յես ուզում եյի
քեզ առաջարկություն անել: (Գնում է Ակուլինան քրք-
մնջում է):

ԱԿՈՒԼԻՆԱ.—Քու յել... պառավ, քրոփակ: Կեղտոտել են, ապա-
կանել... կարծես խողանոց լինի: (Հավաքում է սենյակը)
Շատ հարկավորս ա նրանց յետևից սենյակ մաքրել... շատ
պետքս ա: Ձեմ ուզում—չեմ անի: (Փութաջան կարգի յե բե-
րում սենյակը): Վոչ մի հարկավորություն չկա... Իմ կամ-
քով... ուզում եմ—անում եմ:

Ներս է գալիս Լիզան

ԱԿՈՒԼԻՆԱ.—Ինչի՞ յես յեկել:

ԼԻԶԱ.—Ինչ ես աչքերդ չոնել: Դիրեկտորի սենյակն ես մաքրում:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Դիրեկտորի... բայց քո բանը չի: Ուզենամ սող

կեղտը նորից շաղ կտամ: Դու իմ վերակացուն չես... Ի՞նչ գործով ես շնորհ բերել:

ԼԻԶԱ.—Նիկողայ Սավելիչը տանն է:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Տանը չի ու չի չի լինելու:

ԼԻԶԱ.—Սուտ ես ասում:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Հեշ էլ սուտ չեմ ասում:

ԼԻԶԱ.—Վերա՞նք է:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Հարբած է: Քնել է:

ԼԻԶԱ.—(Ծիծաղում է) Հարբած ե... Իսկ յես ուզում եյի մակույ-
կով զբոսանքի գնանք... Սոխակները դայլալը լսենք...

ԱԿՈՒԼԻՆԱ.—Ականջ դիր, վոնց ա խոմիացնում սոխակը:

ԼԻԶԱ.—(դռնեղում ականջ է դնում): Շվացնում է:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Դու, սերելիս, աղվեսություն մի արա: Ի՞նչ ես ֆասոն ծախում:

ԼԻԶԱ.—Լավ ե իբիկները մակույկով զբոսնել... Շատ եմ սիրում
սոխակների յերգը:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Առանց փետուրի՞: Խորամանկ կլին ես: Հապա փա-
սափուսեա քաշիր անշառ:

ԼԻԶԱ.—Շատ խիստն էք դուք, Ակուլինա Պոտապովնա: Ներս
գալ ել չի կարելի: Վոչ մի խոսք ասել ել չի լինի: Վոչ մի
խակական կուլտուրական վերաբերմունք:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Վորտեղից: Մենք անուսում ենք...

ԼԻԶԱ.—Քո Վարիան իսկական կարլ Մարքս է,—լուրկալով:
Ենպեսն է, վոր հեշ միմոտեցի... Թագուհի յե դառել գըլի-
ներխա... շուտով կգցենք Թագավորական Թախտից:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Թե յես լինեյի, քեզ վաղուց եյի գործաբանից քը-
շել: Դրսից շենք ու շնորքով, շրթունքները վոնց վոր շա-
քար, դունչը—ալուր քսած, մազերը խուճուճ արած:

ԼԻԶԱ.—Ի՞նչ կա վոր, յես մաքրասեր աղջիկ եմ:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Իսկ ներսից—ոճ:

ԼԻԶԱ.—Քո հայհոյանքները ինձ վրա, վաստորեն, աղդեցու-
թյուն չեն անում:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Հեռացի ինքնահավան, թե չե ավելով կարբեմ:

ԼԻԶԱ.—Քու Վարյան, ասում են, ծախվել է նեպմաններին:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Ի՞նչ:

ԼԻԶԱ.—Բանվոր դասակարգի եքսպլուատացիա: Ուզում են իրենց
յոթը ժամով մեր ամբողջ ծաղկող յերիտասարդությունը
քամել:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Քեզ պես կովից շատ բան քամել չի լինի:

ԼԻԶԱ.—Դու ուսմիկ գյուղացի յես, Ակուլինա Պոտապովնա, և ու-
րիշ վոչինչ: Ձեմ ուզում իմ Թանգագին բառերը քեզ վրա
վատնել: (Իռնեղում: Ծեծում է կանչում) Կոլա:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Կանչիր, կանչիր պանիցին:

ԼԻԶԱ.—Ձենդ... (Քաղցր ձայնով) Կոլա: Գնանք սոխակներ
դայլալը լսելու:

ՆԻԿՈԼԻ ԶԱՅՆԸ.—Ա-ա-ա...

ԼԻԶԱ.—Կուշանանք, սոխակները կլեն, Կոլա:

ՆԻԿՈԼԻ ԶԱՅՆԸ.—Լսում եմ... սպասիր կոշիկներս հագնեմ:

ԱԿՈՒԼԻՆԱ.—«Լիզա», «Կոլա»... Թե՛: Ընտանիքավոր տանը,
կենդանի կնոջ կողքին... Կորի, ծեփած ուխ:

ԼԻԶԱ.—(ձգալով) Կոլա, Ակուլինան ինձ ծեծում է:

ՆԻԿՈԼԱՅ.—(Դուրս գալով) Դու ինչ գործ ունես: Դուրս:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Սպասիր, սպասիր... պար կգաս... Ո՛ւ... շուն:
(Շուրջը նայելով դուրս է գնում):

ՆԻԿՈԼԱՅ.—Ծեք ագռավ: Ամեն տեղ քիթ է խոթում: (Նստում է
սեղանի մոտ սաբուրեի վրա): Գլուխս արաքում ե...

ԼԻԶԱ.—Մազերդ հնպես են խառնվել, կարծես հավի քջած
լինի:

ՆԻԿՈԼԱՅ.—Իսկ դու սղալիր... Շատ հիմար յերազ եմ տեսել:
Իբրե թե յես, յես չեմ, ալ շեկ միջատ եմ: (Լիզան քրքը-
ջում է): Սողում եմ: Տեղ ինձ վրա տաք ջուր են լցնում:

ԼԻԶԱ.—(Քրքում է) Ո՛ւ, մամա... ինչո՞ւ միջատ, են ել շեկ:

ՆԻԿՈԼԱՅ.—Սատանան գիտի:

ԼԻԶԱ.—Ծիծաղելի յերազ է: Խաշվեցի՞ր:

ՆԻԿՈԼԱՅ.—Դու արթնացրիր:

ԼԻԶԱ.—Խաշողը ո՞վ եր: Անպայման քու նշանավոր ամուսինը:

ՆԻԿՈԼԱՅ.—Լավ է վոր շեկ է, թե չե սեր, ասում են փորձանք
ե բերում:

ԼԻԶԱ.—Նա յե... են աստվածը նա յե... (Թեփում է Նիկողայի
կողմը): Քու Վարյային շուտով կխուզեն:

ՆԻԿՈԼԱՅ.—Ո՞վ ասաց:

ԼԻԶԱ.—Հաստատ... Քիչ մնաց իշխանություն անի:

ՆԻԿՈԼԱՅ.—Դու վարտեղից գիտես:

ԼԻԶԱ.—Տես շատ բան գիտեմ, բայց հետո... Իսկ Վարյայի վրա
շատ են ատամ սրել... Նա չե պատճառը, վոր կոռպերատի-

վում ողի չեն ծախում: Եղ բանը նա հեշտ չի մարսի: Տղա-
մարդիկ բոլորն ել կողմնակից են ողի ծախելուն:

ՆԻԿՈԼԱՅ.—Առանց ողու ինչ կյանք:

ԼԻԶԱ.—Իհարկե... Այ, հրեն դու տղամարդ ես, դու ել ողու կող-
մնակից ես:

ՆԻԿՈԼԱՅ.—Յե՛ս: Յես հայտնի բան ե, տղամարդ եմ:

ԼԻԶԱ.—Դու եհպիսի... ոխ, դու եհպիսի տղամարդ ես կոլյա:
(Համբուրում է):

ՆԻԿՈԼԱՅ.—(Մաքեղով դեմք): Սպասիր վրա մի ընկնիր: Լալըս-
տում ես, իսկ շրթունքներդ ներկած են... Լուսամուտից
կտեսնեն:

ԼԻԶԱ.—Թող տեսնեն... բավական ե դատարկ խոսքերով կշտա-
նանք: Քեզ վոբպես տղամարդու, հանգիստ տեսնել չեմ կա-
րող: Գնանք մակուկով զբոսնելու: (Յեղում է):

«Յես մակուկով լողում եյի»
Ի՞նչ թանգագին, իմ թանգագին.

ՆԻԿՈԼԱՅ.—Թող:

ԼԻԶԱ.—Քեզ համար յես մի շիշ ողի չեմ պահել:

ՆԻԿՈԼԱՅ.—Ձեր խանգարի կալրաս ու վարունկ...

Ներս են գալիս Վասյան յեվ Մաշան

ՎԱՍՅԱ.—Խաղիյինը տանն է:

ՆԻԿՈԼԱՅ.—Տանն է:

ՄԱՇԱ.—Մենք լեկել ենք ձեզ մոտ:

ՆԻԿՈԼԱՅ.—Գուցե դիրեկտորի մոտ:

ՎԱՍՅԱ.—Ձեզ մոտ, ընկեր Գրեբենով:

ՆԻԿՈԼԱՅ.—Ինչ կա:

ՄԱՇԱ.—Կուլտ-արշավի մասին լսել եք: Սոցմբցման մասի լսել եք:

ՆԻԿՈԼԱՅ.—Ի՞նչ ես խոսքակոխ անում: Լսել եմ... Լավ Հետո
ի՞նչ:

ՎԱՍՅԱ.—Յոթ ժամի տնցնելու հետևանքով...

ՄԱՇԱ.—... Նախապատրաստական աշխատանքը կատարում ենք
ամբողջ հարյուր տոկոսով...

ՆԻԿՈԼԱՅ.—Իսկ յես ի՞նչ գործ ունեմ:

ՎԱՍՅԱ.—Վերաբերվում ե բոլորին, ով գիտակից ե:

ՆԻԿՈԼԱՅ.—Լավ, ասենք յես գիտակից եմ: Բանն ինչու՞ն է:

ԼԻԶԱ.—Միախոսք ե, Յես չեմ ուզում:

ՎԱՍՅԱ.—Ասում եմ, յուրաքանչյուրը պետք ե իրեն նախապատ-
րաստի, ալլապես նա կոլեկտիվի անդամ չե, ընկեր չե:

ՄԱՇԱ.—Հասկանալի՞ յե:

ՆԻԿՈԼԱՅ.—Այնքան ել չե:

ՎԱՍՅԱ.—Ինքնաքննադատություն: Տալիս ես յոթ ժամա: Ու-
ղին—կորչի: Պրոգնոզ—կորչը: Աշխատանքը—կատարյալ...
Ձեր ստորագրությունը:

ՆԻԿՈԼԱՅ.—Այդ ինչո՞ւ:

ՎԱՍՅԱ.—Բոլորից վերցնում ենք: Հաստատիր ստորագրությամբ,
վոր գիտակից ես:

ՄԱՇԱ.—Վոչ թե խոսքով, ալ գործով—պատրաստ ենք ապացու-
ցել:

ՆԻԿՈԼԱՅ.—(Մազերի խառնելով) Դա բռնություն ե աշխատավո-
րության կամքի վրա:

ՄԱՇԱ.—Հոժար ցանկություն, ընկեր Գրեբեն:

ԼԻԶԱ.—Իսկ յես ուղղակի կասեմ (Յույց տալով Նիկոլային) Մրա-
լեբեսին կասեմ—դա Վարվարայի գործն է: Դա, փաստապես
հայտնի յե:

ՄԱՇԱ.—Հիմարություն: Աշխատանքը ընդհանուր ե—կամքն ել
ընդհանուր ե:

ՎԱՍՅԱ.—Ակտիվի կամքը:

ՄԱՇԱ.—Գրվեցեք նույնպես վորակավորումը բարձրացնելու մաս-
նագիտական կուրսերում: Նույնպես—լիկրեզ:

ՆԻԿՈԼԱՅ.—Գրագետ ենք:

ՎԱՍՅԱ.—Շատ ուրախալի յե: Գրագետների համար ել ֆլասակար
չի գարգացում ձեռք բերել: Հասկանալի՞ յե:

ԼԻԶԱ.—Այնպես հասկանալի յե, այնպես հասկանալի... պարզից
պարզ ե: Շատ շնորհակալ ենք: Հո հավիտյանս հավիտենից
խավարի մեջ չե՞նք ֆալու:

ՎԱՍՅԱ.—Ստորագրեցեք:

ՆԻԿՈԼԱՅ.—Կսպասես:

ՎԱՍՅԱ.—Կսպասենք:

ՄԱՇԱ.—Մտածելու համար ժամանակ ե տրվում, ընկեր, 24 ժամ:
Մերժելու դեպքում ինքներդ համեցեք բջիջ:

ՎԱՍՅԱ.—Հարգանքներս, ընկերներ:

Դռներում յերեվում ե Ակուլինան

ԱԿՈՒԼԻՆԱ.—Վասյա, դու ինձ խոստացար գրագիտության համար
գրել: Չմոռանաս: Յերբ եք սկսելու սովորացնել:

ՄԱՇԱ.—Յես ձեզ իսկույն կգրեմ:

ԱԿՈՒԼԻՆՍ.—Գրիբ. Ակուլինա Պոտապովնա Գվադդիչկինա:

ՎԱՍՅԱ.—Հայտարարութիւնը կ'աւծ կլինի դռներէ վրա և ա-
կումբում: Լիկընդի մասին տեղեկանքներ ստանալ Վարվարա
Իվանովնայից:

ԱԿՈՒԼԻՆՍ.—Յես քեզ Վասյա, գրագիտութեան մասին եմ ասում:
Իսկ դու ինձ հասկացար: Քու եղ լիկընդ ա, ինչ ա, ինձ
հարկավոր չի:

ՄԱՇԱ.—Ակուլինա Պոտապովնա, լիկընդը հենց այն ե, ինչ ձեզ
հարկավոր ե: Այդ նշանակում ե անգործիտութեան վերացում:

ԱԿՈՒԼԻՆՍ.—Հա, հասկացա, հասկացա: Դե հենց սկզբից ել ալդ-
պես կ'ասելիք, թե չե—լիկընդ, լիկընդ, իսկ թե մեջը
ինչ կա:

ՎԱՍՅԱ.—Ձվարձալի մարդ ես, Ակուլինա Պոտապովնա: Դե լավ
կ'զբենք:

ԱԿՈՒԼԻՆՍ.—(Ուղեկցելով) Դնաք բարի, սիրելիներս: (Շուտ զա-
լով) Ո՛ւ, կեղտոտ ռեխներ: (Հեռանում ե):

ԼԻԶԱ.—(Քրօշում ե) Իսկական խոտելիքներ... խոսք չկա...
դրանից դենը ել չի լինի:

ՆԻԿՈԼԱՅ.—Ե՛, նրանց ել...

ԼԻԶԱ.—Ահա ինչ, Կոլլա: Իմ կլանքը շատ դառն ե: Ձեմ կարող
յես ալսպես սարսափելի տառապել: Դու պարտավոր ես ինքդ
անձամբ վերջ տալ դրան:

ՆԻԿՈԼԱՅ.—Ի՞նչ ին:

ԼԻԶԱ.—Բացատրելի Վարլայի հետ և բաժանվիք փաստապես ու
ընդմիջա: Սիրում եմ, ասա, ուրիշին, վառ սիրով... Յես չո-
րացել իմ, Կոլլա, և նույնիսկ պատրաստ եմ լաց լինել:

ՆԻԿՈԼԱՅ.—Գիտեմ. գիտեմ, միայն խնդրում եմ չվռնա: Ձեր
վռնոցից մարդ ուզում ե թողը սապնի: Բացատրվել կա-
բելի յե:

ԼԻԶԱ.—Լճերջ, Կոլլա:

ՆԻԿՈԼԱՅ.—Մի կասկածիր:

ԼԻԶԱ.—Կատեգորիկ, Կոլլա:

ՆԻԿՈԼԱՅ.—Գիտեմ:

ԼԻԶԱ.—Դանակի պես կտրիք, Կոլլա:

ՆԻԿՈԼԱՅ.—Լավ ասեցինք: Ի՞նչ ես կ'պել:

ԼԻԶԱ.—Շուտ: Իսկույն, Կոլլա:

ՆԻԿՈԼԱՅ.—Թու, քեզ, զանգուլակ: Մեկ սխալներ ես ուզում,
մեկ—բացատրվել: Ո՞ւմ հետ բացատրվել: Այստեղ չի:

Ուրախ մտնում ե Վարվարան, չնկատելով ներկա յե-
ղողներին:

ԼԻԶԱ.—Բարե Վարվարա:

ՎԱՐՎԱՐԱ.—Բարե Լիզա: Շատ ուշ-ուշ ես գալիս:

ԼԻԶԱ.—Յես խիտ դժբախտ եմ:

ՎԱՐՎԱՐԱ.—Ջրադված ես

ԼԻԶԱ.—Փաստապես Յեվ կուրսեր, և՛ լիկընդ, և՛ շատ բաներ...

Վարվարան պարտքից հանում ե թղթեր յեվ դնում
բարձի տակ:

ՎԱՐՎԱՐԱ.—Ի՞նչ կուրսեր:

ԼԻԶԱ.—Են... ինչպէս ե... անունը մոռացել եմ... Ինչ շատ թուղթ
ունես... Ով ե իմանում կարևոր թղթեր են... Բարձի տակ
ես պահում: Նրա համար ես դու եղպես լուրջ, վորովհետեւ
գլխումդ շարունակ թղթեր են:

ՎԱՐՎԱՐԱ.—(Միծաղով) Թղթերից մարդ շատ ել չի խելոքանա:

ՆԻԿՈԼԱՅ.—Գնա՛ք, Յեղիգովիտա Ստեպանովնա:

ԼԻԶԱ.—Դուք, Նիկոլայ Սավելիչ, բան եյիք ուզում ասել Վար-
վարային: Դե ասացեք:

ՆԻԿՈԼԱՅ.—Հատուկ կ'ասեմ:

ԼԻԶԱ.—Վոչ թե հետո, այլ հիմա ասացեք: Յես դուրսը կ'ապասեմ:
(Խփում ե Նիկոլային: Վարվարան հետևում ե):

ՆԻԿՈԼԱՅ.—Վաղ չի: Խոսքը հո դայլ չի, անտառ չի փախչի:

ԼԻԶԱ.—Ձե, մեկ վոր ասելուցք, — ասացեք: (Քաշում ե Նիկոլայի
քեկի յեվ գրիմասներ անում) Ձեմ հասկանում ինչից եք
քաշվում, Նիկոլայ Սավելիչ: (Դուրս ե գնում: Նիկոլայը սու-
լում ե):

ՆԻԿՈԼԱՅ.—(Դադարից հետո) Նու, դա..., Իսկապես վոչինչ:

ՎԱՐՎԱՐԱ.—Ասա, Նիկոլայ, մի քաշվիր:

ՆԻԿՈԼԱՅ.—(Շիճով ֆմիծաղով) Դատարկ բան ե... Հետո յեկ կա-
բելի յե...

ԼԻԶԱ.—(Դռներում) Նիկոլայ Սավելիչ, շտապելու կարիք չկա...
Սքանչելի գիշեր ե... (Անհայտանում ե):

ՆԻԿՈԼԱՅ.—Այդպես ուրեմն... նշանակում ե... նու, այդ...

ՎԱՐՎԱՐԱ.—Տարորինակ ես: Հայացքդ ել թագցնում ես: Ասա
շուտ: Ընկերները կհավաքվեն, — ել չես կարող:

ՆԻԿՈԼԱՅ.—Լիզայի հարածն ե: Ասելու բան չկա:

ՎԱՐՎԱՐԱ.—Վախենո՞ւմ ես, Նիկոլայ:

ՆԻԿՈԼԱՅ.—Կասես դու չե՞լ... Հիմա դու ժողով ունես, յես ել ունես։
 ՎԱՐՎԱՐԱ.—Բա՛վական ե ստես։ Աչքերիցդ տեսնում եմ։
 ՆԻԿՈԼԱՅ.—Ձե՞ս կարող առանց կոպիտ խոսքերի։
 ՎԱՐՎԱՐԱ.—Լավ։ Լսում եմ։ Սպասում եմ։
 ՆԻԿՈԼԱՅ.—(ձմարում ե գլխարկը, քայլելով սենյակում) Այ թե
 ինչպիսի գործեր... Նու, կարծում եմ, են ինքը... Բնավորու-
 թյուններով անհամապատասխան ենք...
 ՎԱՐՎԱՐԱ.—(Յնցվելով) Ձե՞մ հասկանում։
 ՆԻԿՈԼԱՅ.—Ուրեմն դուրս ե գալիս, վոր...
 ՎԱՐՎԱՐԱ.—Համարձակ, Նիկալայ։ Դե, ուղղակի...
 ՆԻԿՈԼԱՅ.—(Մի շնչով վրա տալով) Բնավորություններս տարբեր,
 ուրեմն զգացմունքներս ել տարբեր...
 ՎԱՐՎԱՐԱ.—Ահա թե ինչ... Ե՛հ, ինչ արած... Հետո։
 ՆԻԿՈԼԱՅ.—Հետո,—պարզ ե։
 ՎԱՐՎԱՐԱ.—Ինձ համար վոչինչ պարզ չե։
 ՆԻԿՈԼԱՅ.—Թե վոր զգացմունքներ չկան, նշանակում ե կատա-
 բյալ ազատութուն։
 ՎԱՐՎԱՐԱ.—Յե՛վ զգացմունքներ... և բնավորությունները տար-
 բեր։ Ամեն ինչ տարբեր։ Վաղճեց ե այդպես։
 ՆԻԿՈԼԱՅ.—Վաղճեց։
 ՎԱՐՎԱՐԱ.—Յե՛վ լմերջ։
 ՆԻԿՈԼԱՅ.—Կատակի բան չկա։
 ՎԱՐՎԱՐԱ.—Այդպես ուրեմն միանգամից վերջացած ե։
 ՆԻԿՈԼԱՅ.—Դե ի հարկե։ Հապա ինչպե՞ս։
 ՎԱՐՎԱՐԱ.—Յերևում ե, իսկապես լուրջ ե, իսկ յես, հիմարս
 հարցնում եմ... Սպասիր... ինչ ելի ուզում ասել քեզ... Վատ
 բան չկարծես... Լավ բան, Նիկոլայ, ... Բայց ահա մոռացա...
 (Տառապանքով մտածում ե)։
 ՆԻԿՈԼԱՅ.—Ի՞նչ։
 ՎԱՐՎԱՐԱ.—(Նայելով նրա աչքերին) Ցավ ե պատճառում դա ինձ,
 Նիկոլայ։
 ՆԻԿՈԼԱՅ.—Կո՛ւյ չեմ անում։
 ՎԱՐՎԱՐԱ.—Խոսքերը յերբեմն ավելի մեծ ցավ են պատճառում,
 մտքակից ել խիստ։ Սպասիր, սպասիր, մի ընդհատիր։ Քանի
 տարի յե միասին ենք... Կատուշային խնամել—մեծացրել
 ենք... Սովի տարին վերջին կարտոֆիլը կիսել ենք միա-
 սին... Տիֆով պառկած զառանցելիս միմիանց անուն ենք
 ասել։ Մեռած գործարան առաջինն ենք չեկել միասին,

վորպեսզի կյանք տանք նրան... Մեր մարմիններով, մեր
 սրտերով ջերմացրել ենք այն... Յե՛վ դու ինձ համար այն-
 պես մեծ ելիր, վոր յես քեզ վրա ցածից վեր ելի նա-
 յում... Հիմար աղջիկ ելի, վոր ամուսնացա քեզ հետ միշտ
 աշխատում ելի քո յետվից հասնել... Յե՛վ հասա... Նպատակս
 իրագործվեց... Հիմարությունս, կանացի թուլությունս ճա-
 նապարհին թողեցի... Մտածում ելի, այժմ ավելի ամուր կա-
 պերով կկապվենք... Բայց ի՞նչ դուրս յեկավ, ի՞նչ արտա-
 սովոր բան պատահեց։ Մտիկ եմ տալիս, ուզում եմ ըմբռնել,
 բայց չեմ հասկանում։ Գլորվել ես ցած, հարբեցողության ես
 տվել մեր կյանքը, քայքայվել ես... Ու կորցրել ես քո ա-
 մուր, մարդկային սիրտը... Իսկ սիրտդ կորցնելուց հետո մնա-
 ցել ե դատարկութուն... Ե՛ր, դու, Նիկոլայ... Իմ կոլյա...
 Ա՛յ, ինչե՛ր եմ ասում... Բոլորովին այն չեմ ասում... Հար-
 կավոր ե լուռ մնալ, իսկ յես խոսում եմ։ Սա ինչ տանջանք
 ե, սա ինչ թուլն ե... Լավ իրագործվեցին նպատակներդ,
 դիրքիկտոր Վարվարա... (Արտավում ե)։

ՆԻԿՈԼԱՅ.—Նու, նշանակում ե, ահա, բացատրվեցինք։

ՎԱՐՎԱՐԱ.—(Արտավալից) Մեր սերը ողու շղի հետ փոխեցիր...

Լիզալի ծայնը.—«Կոլյա»։

ՎԱՐՎԱՐԱ.—(Յնցվում ե) Նա... Կանչում ե քեզ։

ՆԻԿՈԼԱՅ.—Լսում եմ։

ՎԱՐՎԱՐԱ.—(Նայում ե նրան տանգանով, աղաչական) Գնա՛ւ ես։

ՆԻԿՈԼԱՅ.—Գնում եմ։

ՎԱՐՎԱՐԱ.—Մի ծաղրիր իմ ամոթխածությունը, իմ այդպես նը-
 վաստանալը... Մի գնա, խնդրում եմ քեզ, սիրելիս...

ՆԻԿՈԼԱՅ.—Հապա տանն ի՞նչ անեմ։ Քացխեմ։ Մեռնելու չեմ
 գնում։ Յետ կգամ։

ՎԱՐՎԱՐԱ.—Գիտե՛մ յետ կգաս, բայց այն ժամանակ կխորտակվի
 ամեն ինչ. մինչև վերջին քարը։

Լիզալի ծայնը.—«Կոլյա»։

ՆԻԿՈԼԱՅ.—Դե գալիս եմ... Այ քեզ գրողի տարած... (Մաքում ե
 նախաժի ֆրիգեր)։

ՎԱՐՎԱՐԱ.—Մտածիր։ Լավ մտածիր։

ՆԻԿՈԼԱՅ.—Մտածելու բան չկա։ (Գնում ե դեպի դուռ)։

ՎԱՐՎԱՐԱ.—Մնա։ Ձե՛մ ուզում վոր գնաս։ Ձե՛մ կարող թողնել քեզ...

ՆԻԿՈԼԱՅ.—Թող սուգ ու շիվանք։

ՎԱՐՎԱՐԱ.—Հասկացիր, Նիկողայ, սա վտակալութունն չե՛ խանդ չե անիծյալ, ալ... սեր ե, Նիկողայ...

ՆԻԿՈՂԱՅ.—Ուժով, միևնույն ե, չես պահի:

ՎԱՐՎԱՐԱ.—Ուժով չեմ պահի, բայց սիրո ուժով կարելի չե պահել... Կարելի չե, Նիկողայ: (Մտնում ե Նիկողային յետ պարզում ձեռքը):

Լիզայի ձայնը.— «Կոլյա»:

ՎԱՐՎԱՐԱ.—Մի գնա: Չեմ թողնի: Սպասիր: (Նիկողայը ռատ գնում ե: Վարվարան վազում ե քա յետից) Լսում ես Նիկողայ, վերջին անգամ եմ ասում... (Խնկում քաղիվում ե Կրյուկովի հետ):

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ուր ես այդպես շտապում:

ՎԱՐՎԱՐԱ.—(Կանգ ե առնում օփորված) Ընկեր Կրյուկով:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Նա ինքն ե: Քեզ ի՞նչ ե պատահել: Կարծես լաց ես չեղել: Մարդիտ հետ կռվե՞լ ես:

ՎԱՐՎԱՐԱ.—Իմ յետից: Ժողովի: Յես իսկույն:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Մի շտապիր: Յես դիտավորյալ եմ յեկել:

ՎԱՐՎԱՐԱ.—Իրաւովորյալ:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Մի վախեցիր, ի՞նչ ես դողում: Դատարկ բան ե: Յեկել եմ իմ մասին խոսելու:

ՎԱՐՎԱՐԱ.—Քո մասին...

ԿՐՅՈՒԿՈՎ.—Այո, իմ մասին, ընկեր Գրեքնեա:

ՎԱՐՎԱՐԱ.—Ի՞նչ կա:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ուղում եմ ժողովից առաջ ասել...

ՎԱՐՎԱՐԱ.—Վոր նորից դաժմադալ ես անելու:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Այդ չե... Յես, ճիշտն ասած, չեկել եմ...

ՎԱՐՎԱՐԱ.—Բանն ինչու՞նք ե:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Են մասին ելի... Հակառակում ելի, մերժում ելի իմ ձայնը տալ, իսկ այժմ, յերբ սկսվեց գործնական աշխատանքը, յերբ բոլորին, նշանակում ե, շոշափեցի, յերբ գործով տեսա, թե լոթ ժամյա աշխատանքով ինչ նվաճումներ կարող ենք ունենալ—համոզվեցի: Հասկացա բանի ելու թյունը:

ՎԱՐՎԱՐԱ.—Դու... Ինձ նայիր... Դու չե՞ս խաբում:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Վոչ...

ՎԱՐՎԱՐԱ.—Խոստովանվիր, գուցե ուզում ես աչքերիս թող փչել:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Յես, ընկեր Գրեքնեա, ազնիվ մարդ եմ ե քառաբար չեմ յեղել:

ՎԱՐՎԱՐԱ.—Վերջին որերս յես մի տեսակ զգուշ եմ դարձել... Խառնել եմ, ուր ե բարեկամը ե ուր թշնամին: Վատ բաներ եմ տեսնում: Ինչ վոր մի չար ուժ խաղ ե անում մարդկանց հետ: Հաճախ լսում եմ, ինչպե՞ս շնջում են անկուհներում. ցեխերում ծածուկ բամբասում են, իսկ աչքիս քաղցր ժրպտում են: Կա մեկը, վոր սողում ե մեր մեջ ու հարություն նից լեղուն ծաղցնում ե: Լուրջ գործերի նախորդակին ենք, մեզ հիմի հարկավոր ե միաձուլ լինել... բայց կա մեկը, վոր մարդկանց շփոթեցնում ե:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Այդ բանում յես անմեղ եմ... Իմ ասածները գործով կարող եմ ապացուցել:

ՎԱՐՎԱՐԱ.—(Նայելով Կրյուկովին ակնդես) Ճիշտ ե, Ալեքսեյ:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Այո:

ՎԱՐՎԱՐԱ.—(Ուրախ) Դե այ, տեսնում ես ինչպե՞ս լավ ե: Ինչպե՞ս ուրախացրիք դու ինձ, Ալյոշա: Այս տեսակ բողբոջների համար շատ բան կարելի չե ներել: Ուզում եմ, վոր ժողովում դու մեր գործը պաշտպանես: Լավ պաշտպանես: Դա շատ կարևոր ե, Ալեքսեյ:

Մտնում ե Վլասովը:

ՎԼԱՍՈՎ.—Դիրեկտորին հարգանքներս... Բարով, Կրյուկով:

Դռներում յերեվում են Վասյան յեվ Մաշան:

ՄԱՇԱ.—Վարվարա Իվանովնա, ժողովի:

ՎԱՐՎԱՐԱ.—(Ծիծաղով) Ընկերներ, տեսեք սիգնալիստը յեկավ: Նա, մտրակը ձեռքին, ման ե գալիս իմ յետից: Դու ի՞նչ ես ինձ վրա հրամանատարութուն անում:

ՎԱՍՅԱ.—Մենակ ձեզ վրա չի, Վարվարա Իվանովնա: Նրա լեղվի տակից յերբեմն դուրս գալ չի լինում:

ՄԱՇԱ.—(Ծիծաղով) Գանդատվիր, գանդատվիր, զրպարտիչ-մատ-նիչ: Թե վոր քեզ հուպ չտան, դու ֆուդբոլիստ կդառնաս:

ՎԱՍՅԱ.—Ճըթճըթան չաչանակ:

ՎԱՐՎԱՐԱ.—Բավական ե, չե իբար կդնքսեք: Ընկերներ, շնորհավորում եմ բոլորիդ:

ՎԱՍՅԱ.—Ի՞նչ կա:

ՄԱՇԱ.—Ի՞նչ ե պատահել:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ի՞նչնե՞ս շնորհավորում:

ՎԱՐՎԱՐԱ.—(Բարձի տակից հանում ե բելով կապած քղբերի մի կապոց յեվ ճանդիսավորապես ցույց տալիս) Այստեղ, ընկերներ, թանգարտեք հարստութունն ե:

ՎԼԱՍՅԵՎ.—Ի՞նչ բան է: Ի՞նչ հարստութիւն:

ՎԱՐՎԱՐԱ.—Այստեղ գտնվում է այն ամենը, ինչի վրա դուրս ենք կոտրել, ընկերներ: Մեր գործերն են: Յոթ ժամի անց- նելու պլանները, նախահաշիվները նյութերը:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ահա թե ինչ:

ՎԱՍՅԱ.—Տեսե՛ք, ինչքան է հավաքվել:

ՎԼԱՍՅԵՎ.—Մի ամբողջ, կարելի չէ տեսնել, դրասենյակ:

ՎԱՐՎԱՐԱ.—Պլանը կատարել ենք: Ճիշտ ժամկետին հասցրինք: Վաճ մի որ չենք ուշացրել: Ամեն ինչ տպագրված է և կարգի դրված... Բայց չեթե ուշացրել ելինք, մեծ անախորժութիւն կծագեր, ինչպէս և պլանի խաղաղում կառավարար:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Այդ մեկը ճիշտ է:

ՎԱՐՎԱՐԱ.—Ժողովից հետո չես սևագրութիւններն ու պատճենները կշնկեմ, իսկ մաքուր գրածները, այսօրվա ժողովի արձանագրութիւն հետ միասին կծրարեմ: Իսկ դու, Ֆեդար Ստեպանիչ, լուսագրովին կտանես քաղաք: Տես, ճշտապահ չեղիր:

ՎԼԱՍՅԵՎ.—Մի կասկածիր... Ե՛լ, դործարար կին ես: Յե՛վ ի՞նչ պես ես ամեն տեղ հասնում...

ՎԱՐՎԱՐԱ.—Քնով չընկես, Ֆեդոր Ստեպանիչ:

ՎԼԱՍՅԵՎ.—Ապահով չեղիր: Առաջին աքլորականչին վեր կը կենամ:

ՎԱՐՎԱՐԱ.—Դե, կարծես ել բան չկա: Գործնականապես չոք ժամի անցնելու աշխատանքը հիմնավոր կերպով ենք սկսել: Մանուկների համար մտուր ենք բաց անում: Հաղար նոր բանվորների համար բնակարաններ ենք պատրաստում: Յերկու ճաշարան ենք սարքավորում: Վերափոխում ենք լուսավորութիւնը, վենտիլացիան... Ուրիշ... Ժողովում գեկուցման ժամանակ ամեն ինչի վրա մանրամասն կանդ կառնեմ: Բոլոր հարցերի մասին այսօր ժողովում գործա- բանի առաջ հաշիվ կտանք:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ճիշտ է: Կատարյալ կոնտակտով, նշանակում է:

ՎԼԱՍՅԵՎ.—Հապա ինչպես:

ՎԱՐՎԱՐԱ.—(Ուրախ) Վերջ: Գործը գնում է (ընկերներ):

ՎԱՍՅԱ.—(Ուրախ) Գնում է, գրողը տանի: Թույլ տվե՛ք փաստա- թղթերը շոշափել:

ՎԱՐՎԱՐԱ.—(Ծիծաղելով) Չայքիս, —տաք են:

ՄԱՇԱ.—(Ծիծաղելով) Խեղկատակ:

ՎԼԱՍՅԵՎ.—(Ձեռքեր շփելով) Հրաշալի: Նշանակում է թռչում է վորպես կուրյե: Տրեստ:

ՎԱՐՎԱՐԱ.—Ծրարը, ժողովի արձանագրութիւն հետ միասին, կստանաս վաղը: Դիշերը արձանագրութիւնը ինքս կգրեմ ու բոլոր թղթերը մի անգամ ել կհամեմատեմ: (Թղթերը քազցնում է նախկին տեղը):

ՎԼԱՍՅԵՎ.—Մի բան միայն վատ է, ընկերներ... Գաղտնաբար վորպեսզի պատերը չլսեն...

ՎԱՐՎԱՐԱ.—Ել ի՞նչ:

Բոլորը շրջապատում են Վլասիվին

ՎԼԱՍՅԵՎ.—Ինժեներ Միրնիկովի վրա կասկածում եմ:

ՎԱՍՅԱ.—Յեզոր Սերգեյիչ:

ՎԼԱՍՅԵՎ.—Նրա:

ՉԱՅՆԵՐ.—Ի՞նչ կա: Ի՞նչ պատճառով: Ասա ինչ լսել ես: Պատ- միր, մի վախեցիր:

ՎԼԱՍՅԵՎ.—(Չուսպ ձայնով) Յես նրան լուրջ կերպով հետևում եմ... Մարդու մեջ փոփոխութիւն է կատարվել: Գնում եմ նրա մոտ, կանչում եմ ժողովի, իսկ նա վոչ մի ձայն: Յե- դան նման համարում է.—անլիտ, գզգզված, փռել է թղթ- թերն ու դժում է... Ձեմ գա, ասում է, մի՞նչ և վերջին գծա- գիւրը չպատրաստեմ...

ԿՐՅՈՒԿՈՎ.—Ինչպէս թե չեմ գա: Հապա գեկուցումը:

ՎԼԱՍՅԵՎ.—Ձհանդամը, ասում է, գեկուցումը: Մի խանդարեք, բղավում է: Իմ ամբողջ գեկուցումը իմ գծադրի մեջ է,— ասում է: Իսկ իմ կարծիքով, խուսափում է, ուզում է աշ- խատանքը քանդել:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Հա, դա սարբորինակ է ...

ՎԼԱՍՅԵՎ.—Ամեն կողմ սպեց—ֆասսարներ են, նշանակում է: մենք ել պետք է դուրս լինենք:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Հետաքրքիր քաղաքականութիւն է:

ՎԼԱՍՅԵՎ.—Ի՞նչ կասե՛ք, հ՞ը:

ՎԱՐՎԱՐԱ.—Վոչինչ չեմ ասի-վոչ վատ, վոչ լավ: Հարկավոր է հասկանալ: Հենց այդպես չի կարելի դատել:

ՎԱՍՅԱ.—(Բարբոսված) Ձեմ հավատում ես դրան—և ուրիշ վո- չինչ: Մտածել անգամ չեմ ուզում: Վաճ մի կասկած չի կա- բող լինել: Յեզոր Սերգեյիչը հիմար մարդ չէ, սրիկա չէ, ալլ բուրբին հայտնի չէ, բոլորը նրան ճանաչում են: Գը- նանք ժողովի:

Ներս է վազում Կատյան

ԿԱՏՅԱ.—Մայրիկ, հալո:

ՎԱՐՎԱՐԱ.—Ժողովի:

ԿԱՏՅԱ.—Իսկ յես—ժողովից: Մայրիկ, մենք շուտով ծծկեր
բեխաներ ենք խնամելու, վարժուհին այդպես էլ ասա
Ասում ե, բաց ինքը ծիծաղում ե.—Եխ, դուք, մայրիկին
ասում ե:

ԿՐՅՈՒԿՈՎ.—Մսուրներում:

ԿԱՏՅԱ.—Հա, Հերթապահություն են նշանակելու: Մայրերը կ
գնան աշխատանքի, իսկ մենք յերեխաներին կպահենք:

ՎԱՍՅԵՎ.—Եղ դուք կգա են, վոր յոթ դայակի պահած յեր
խան կույր կլինի: Բոլորին հաշմանդամ կդարձնեք:

ԿԱՏՅԱ.—Ամենավին ել ճիշտ չե: Մենք մենակ չենք լինի,
մեծերի հետ... Հաշմանդամ են դառնում, յեթե հսկողություն
չկա, իսկ մեղ մոտ բոլորը հսկողության տակ կլինեն:

ՎԱՐՎԱՐԱ.—Լավ, լավ, դայակ, մի վիճիր, պարկիր քնել
կաթ կխմես:

ԿԱՏՅԱ.—Չեմ ուզում:

ՎԱՍՅԱ.—Դայակիս տեսեք: Դեռ քեզ ե դայակ հարկավոր:

ՄԱՇԱ.—Են ել մեկը չե:

ՎԱՐՎԱՐԱ.—Ձկան յուլը հիլ չի խմել:

ԿԱՏՅԱ.—Խմել եմ, մայրիկ, ազնիվ խոսք, խմել եմ:

ՎԱՐՎԱՐԱ.—Պիտենք յերբեք սուտ չի խոսում:

ԿԱՏՅԱ.—Յերբեք: Մի անգամ խմեցի, իսկ մյուս անգամ ժամ
նակ չեղավ:

ՎԱՐՎԱՐԱ.—Պետք ե լինի:

ԿԱՏՅԱ.—Միշտ պատրաստ:

ՎԱՐՎԱՐԱ.—Լույսը հանգցրու ե պարկիր: Գնանք, ընկերներ
Բոլորը գնում են: Կատյան կաթ ե հանու
Դեմքը ծամածռում ե:

ԿԱՏՅԱ.—Բոտո... փրփուրը չեմ սիրում: (Վազ ե ցալիս դեպ
յուսամուտ, կամեցավով քափել յերեսի փրփուր: Կանգ ե տ
նում) Պիտենք յերբեք չի ստում: (Խնում ե):

Ներս ե գալիս Ակուլինան

ԱԿՈՒԼԻՆԱ.—Պարկիր, պարկիր չարածնի:

ԿԱՏՅԱ.—Կրկին դու հետևում ես ինձ:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Յեմ հետևում եմ, ե կհետևեմ: Պարկիր: Յես լու
կհանգցնեմ: Վոչ ցերեկը, վոչ գիշերը ձեր ձեռքից հանգ
տություն չկա... Մեկ յերեխային հսկիր, մեկ մարդով զբա

վիր: Թու, պատիժ ա: Պարտավոր չեմ յես քեզ հսկելու...

Վերադառնալ ես պառկում:

ԿԱՏՅԱ.—Այստեղ:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Դե, պառկիր:

ԿԱՏՅԱ.—Յես պառկեմ, իսկ դու պատմիր:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Յես դեռ խելքս չեմ կորցրել... Կկորցնեմ աստված
վկա, կկորցնեմ:

ԿԱՏՅԱ.—Վոր այդպես ե, յես կպատմեմ:

ԱԿՈՒԼԻՆԱ.—Իսկ յես ահա՞ չեմ դնի:

ԿԱՏՅԱ.—(Պառկում ե անկողնում) Իսկ յես կպատմեմ: Լինում ե
չի լինում... մի մարդ ե լինում...

Ակուլինան հանգցնում ե լույսը

ԱԿՈՒԼԻՆԱ.—(Փնրփնրում ե) Արի ու քաշ արի սրանց հետ...

